Արձանագրություն 6

ՀՀ ՖՆ կարիքների համար « ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.03.2019թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝

Մ. Սարգսյան - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության պետ ԳՊ/ԳԱՊ,

Է. Պողոսյան - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (նախագահ) ԳՊ/ԳԱ,

Մ. Միքաելյան - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ,

Կ. Սիրունյան - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի տնտեսվար ԳՊ/ԲԱ,

Բացակայում է՝

Ա. Մարտիրոսյան - ՀՀ ֆինանսների նախարարության գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի պետ ԳՊ/ԳԱ

Գնումները համակարգող

Լ. Սահակյան՝ ՀՀ ՖՆ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ

I. Տեղեկություններ պայմանագրի կնքման վերաբերյալ, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

1. «Ինտերբլին» ՍՊԸ-ն հրավերի պահանջներին համապատասխան սահմանված ժամկետում կապի կազմակերպության՝ Հայփոստի միջոցով ս/թ մարտի 15-ին ուղարկել է իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովումը/այն հաստատված և լրացված չէ մասնակցի կողմից և չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին/, որը մուտք է եղել ՀՀ ֆինանսների նախարարության շենք ս/թ մարտի 21-ին:

2. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետը՝ մասնակիցը չի գրկվում պայմանագիրը կնքելու իրավունքից, սակայն պայմանագիր չի կնքվի մինչև մասնակիցը չներկայացնի հրավերի պահանջներն համապատասխան պայմանագրի ապահովումը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ծանուցել «Ինտերբլին» ՍՊԸ-ին 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու և ներկայացնելու հրավերի պահանջներին համապատասխան լրացված և հաստատված պայմանագրի ապահովումը:

2. 18.03.2019թ.-ին կայացած **ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 1 որոշումը համարել չեղյալ՝ համաձայն նույն արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջների:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

1. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը**

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել սույն թվականի մարտի 26-ին՝ ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Աղամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ *Մ. Սարգսյան*

Հանձնաժողովի անդամներ՝ _____ *Է. Պողոսյան*

_____ *Մ. Միքաելյան*

_____ *Կ. Սիրունյան*

_____ *Լ.Սահակյան*